

մեծ եկեղեցի մի. այժմ հանդուցեալ է: Բայց լեան մեծ եւ բարձր է քան զԱրճիաշու, զոր բնաւ յամառն եւ ձմեռն ոչ վերանայ ձիւնն ի նմանէ. այլ եւ ասին թէ յորդն հոտած նեխած է եւ յորդնած: Եւ մեք ելաք մինչ ուր եկեղեցին էր. եւ այլ ոչ կարացաք դնալ ի վեր, զի սաստիկ քամի էր եւ հով պաղ եւ ձիւնամեծ, թէպէտ ամառն էր. եւ անտի տեսաք որ քաղքին կէսն աւեր եւ այրած էր եւ ամայի ի ձէլալոցն:

Եւ անտի ծովեղերը եկաք ի ՄՈՒՍԱԼԻՃ խասապան: Կացաք անդ ամիս մի եւ հինգ օր. զի էր հարիւր տուն հայի եւ երկու էրէց: Անտի մին օրն հասաք ի ՊԱՆՏՐՄԱՅ խասապան, որ էր ծովու ետուն: Եւ անդ կայր տնակ մի, ժամ կ'ասէին, եւ քանի մն տուն հայի, մէկ հարեղայ մի եւ էրէց մի. բայց հոռոմ յուով: Եւ կացաք անդ տասն օր: Եւ օրուկէսն զեղօրօք եւ շիթթիկովք՝ ուր Հայք կային մէկէ երկուսէ՝ հասաք ի յԵՏՆՃՈՒԿ քաղաքն. եւ այն ետու էր՝ ի բարձր լեռան վրայ. եւ շուրջ ու բոլորն սափի ձիթենիք, այգիք եւ նոնենիք անթիւք: Եւ կայր անդ երեք էրէց, հարիւր յիսուն տուն հայի. եւ տուն մի ժամ ասէին: Եւ այս քաղքին չէլմաքն եւ գոներն ուստի ջուրք բխէին, ամէն խաչ կար հանած. ուստի յայտ է որ քրիստոնէից չէնք էին:

Եւ անտի յառաջ կէս միլ մի կայր ատա մի ի մէջ ծովու, մեծ քան Ստամպոլ, որ այժմ ամայի էր. միայն նշմարանքն երեւէին, եւ պրճերն եւ դուլանին: Եւ գնացեալ ի նա տեսաք զարմանալի շինուածք եւ մեծամեծ եարուք հին ժամանակաց, եւ գետնափոր մաղարայք, ներքեն տաշած եւ կոփած, մեծ վէմք եւ սայլք պատերն վերեն ու ներքեն: Եւ մտեալ ի նոսա՝ տեսաք յոյժ լայնանիստ եւ ընդարձակ, որ թէ երեք օրն շրջաք չհասանէաք ի վերջն. եւ ասին թէ այս էր յառաջն քաղաքն որ կոչի ԲՈՒՉԱՆԴԻԱ, զոր Բուզանդ թագաւորն է շինել իւր անուան վրայ. զոր թողեալ զայն յայլ տեղով շինեցին եւ անուանեցին Կոստանդնուպոլիս. եւ այժմ ամայի մնացեալ. անտի կրեն զատրղայիւք փայլանք զանթիւ մէրմէրսն եւ սալս մեծամեծս հագար ամաց ի վեր ամէն եարուից կու կրեն եւ չի հասնիլ, ոչ կու պակսի:

69 յօրով: — 77 քոնք: — 80 յատա: — 81 զոր: — 82 յոյժմ: — 91 զոր կ. Բուզանդայ:

Եւ սակաւ մի յառաջ էր կղզի մի փոքր, ուր կայր հինգ տուն հայի: Կացաք երկուս 100 միս յեանջուկն, զոր բազում մարդասիրութիւն ցուցին մեզ անդր Հայքն:

Եկաք անտի ՊԱԼԳԻՍԱՐ. որ եւ սա յոյժ բարձր լեռանց վրայ շինած էր եւ յոյժ քարուտ, որ դալար չէրեւէր: Եւ կացաք անդ 105 երկու շաբաթ, զի կայր քառասուն տուն հայի եւ էրէց մի:

Եւ անտի եկաք ի մեծահոգակ քաղաքն ՄԱՆԻՍԱՅ, որ էր թախտ շահատաշից, այս է որդոց թագաւորաց, զոր անդ յղեն մինչեւ 110 անցի եւ զարգացի: Եւ կայր այս քաղաքս երկու եկեղեցի Հայոց, փայտէ տան պէս. մինն ի վերն լեռան վրայ, եւ մինն ի դաշտն. կայր եպիսկոպոս մի անուան Յակոբ Թրնօզցի, եւ երկու էրէց եւ քանի հարիւր տուն հայի. 115 զոր սիրով ընկալան զմեզ եւ յոյժ մեծարեցին: Կացաք անդ երկու ամիս եւ տասն օր, զի էր յոյժ մրգաւէտ եւ բարելի, լի եւ առատ ամենայն պտղովք:

Եւ անտի կէս օրն հասաք ի ՉՄԻՐ քաղաքն Նիկողայոսի: Եւ սա էր ծովու ետու մեծ սկալայ, որ Ստամպոլայ, Մարայ, Վանատիկու, Սաքըղու եւ այլոց կէմիք կու խաղային եւ բազում Թոանիք եւ Հոռոմք կային անդ: Եւ սա եւս յոյժ պաղատու եւ մրգաշատ. իսկ սարուծորն ամէն ձիթենիք եւ նոնենիք: Եւ կայր Հայոց եպիսկոպոս մի, հարեղայ մի եւ էրէց մի, հարիւր տուն հայի եւ երկու եկեղեցի. մինն ի բերթն եւ մինն ի գուրս: Եւ ունէր սա որպէս Մանիսան՝ բերթ 130 անառիկ ի վերայ բարձր լեռին. բայց հաւան զէչ էր եւ ջուրն՝ չար: Եւ կացաք անդ երեք ամիս:

Եւ անտի երկու օրն հասաք ի ԹԻՐՍԱՅ: Եւ սա մեծ քաղաք էր, պէնտէր եւ չէն. զի 135 ամէն օր բեռն կու կապվէր եւ քարվան կ'ելնէր. բայց հայ տասն տուն կար. եւ էրէց չկար: Կացաք անդ ութ օր. քաղաքացիքն յոյժ քաղցր էին եւ հիւրասէր, Հայք եւ Տաճիկքն: 140

Անտի ելեալ օրուկէսն հասաք ի ԿՕՉԱԼ ՀԻՍԱՐն: Եւ ի ճանապարհին կէսն զիպաք մեծ եւ բարձր լեռան մի. եւ ի գլուխ լեռինն կայր աղբիւր մի քաղցրահամ, ցուրտ եւ սառն, որ յամառն մարդ չի կարել երկու 145 կում ըմպել ի պաղութենէն: Եւ իջեալ ի լեռնէն ի դաշտն, ուստի սկսաւ նեղել զմեզ հա-

ւան, մինչ զի հիւանդացաք ամէնքս. զի սէհի էր երկիրն այն եւ մերձ հարաւակողմ ջուրքն միասարարք եւ պտուղքն սափի նարինձ, թուրինձ եւ լիմօն անթիւ եւ աժան, 150 ձմեռ չի լինէր, այլ հանապազ ամառ, մինչ զի անասունք եւ չորքոտանիք ի տարին երկու անգամ ծնանէին. նոյնպէս ամենայն բոյսք եւ դալար եւ բանջարք երկու հեղ սերմանէին 155 եւ երկու հեղ հնձէին. եւ այնպէս մեծ շող լինէր որ ասին թէ տարի մի մէջթի վրայի արճիճն հալել էր ի սաստիկ ջերմութենէն: Եւ ոչ երեւի ի գաւառն այն այլ թոչուն, 160 բայց միայն արագիւք անթիւք սփռեալք յամենայն երկիր, ի դիւզս, ի քաղաքս եւ ի տանիս: Կայր անդ էրէց մի, երեսուն տուն հայ եւ փայտեալ ժամատեղ մի:

Չոր անտի կամեցաք դնալ ծովեղերօք ի Պատմոս կղզին, ուր տեսիլ ետես եւ զաւետարանն զրեաց Յոհանէս. եւ անդ կայ մարմին Պրոխորոնի զըմոսեալ զըմոով ի արծաթի տապանի, որպէս կենդանի: Բայց ասին թէ յատ 165 Լէվիտք շրջին խայիխնովք, վասն որոյ մեք երկեաք գնալ, թէպէտ մերձ էր մեզ երեք աւուր ճանապարհ. այլ զարձաք կրկին յիգմիր եւ անտի ի Ստմպոլ:

Եւ նստեալ ի նա՝ հինգ աւուր ճանապարհն քան եւ երեք օրն չի կարցաք հասնիլ, այլ ի մէջ ծովու տատանէաք եւ երեւիլ, այլ ի մէջ ծովու զանապան կղզիս 175 բեալ կայաք. ուր եւ տեսաք զանապան կղզիս եւ աւերակ չէնս: Եւ եկեալ ի մէկ մեծ կղզի մի հոռոմի որ ՄԻՏԻԼԻ կոչի. եւ ասին թէ ՅԿ դեղ կա ի նմա եւ հինգ քաղաք: Եւ ի սկէլէն երեք տուն հայի գտաք՝ համանի. առ նոսա հանգեաք երկու օր եւ միթարեցաք: 180 Ապա անտի եկաք ՊՕՂՈՍ ՀԻՍԱՐն, ուր երկու կողմանց շինած էր բերթ ամուր Անատոլու եւ Ուռումէլու. եւ էին մեծամեծ թօրք. եւ տեսաք թօրք մի Պալեմազ անուն, որ բերնին չափն խուլած մի էր: Եւ կայր անդ երկու երեք տուն հայ. զոր տեսեալ զմեզ ջերմոտ եւ տկար, ընկալան սիրով եւ տաքան ի տուն հոգ տանելով մեզ եւ զարման՝ շաբաթ մի ծառայելով եւ կերակրելով զմեզ: 190 Եւ առաջնորդեալ հասուցին զմեզ մինչեւ ի ԿԵԼԻՊՈԼԻ, որ եւ նա էր մեծ քաղաք եւ մեծ սկէլէ. զատրղայք եւ կէմիքն ամէն անդ ժողովէին եւ սպասեն քարխտանին, եւ անտի

երթան ի վերայ թշնամեաց: Այլ եւ կալիօնքն Մարայ անդր նաւահանդիստ առնուն: Այլ եւ զհացն, զջուրն եւ զայլ կերակուրն անդր պատրաստեն: Կացաք անդ ամիս մի. զի շատ հայ կայր. հարեղայ մի եւ էրէց. եւ ի տաշխանն օտայ մի ժամ կ'ասէին: Եւ մարդիքն չարարարոյք էին: Իրեք օրն անտի եկաք ի ԹԻՔԻՐՏԱՂՆ: Եւ այս եւս փոքր սկէլէ էր ի վերայ դարի քաղաքին: Եւ կայր հաստատ եկեղեցի մի ի վերայ ծովու, զոր Յակոբ անուն վարդապետ մի Ձէյթունցի, զոր մեծ ջանիւ եւ տրօք բազմօք շինել էր եւ վախճանեալ թաղեալ կայր ի նմա: Եւ էր անդ երկուհարիւր կամ աւելի հայ. հինգ էրէց եւ երկու հարեղայ: Կացաք 210 անդ երկու ամիս:

Եւ անտի մտեալ ի նա՝ մտաք ի ՂԱՐՍՄՈՒՍԱԼ սքէլէն: Եւ կայր անդ էրէց մի ծերունի եւ սակաւ հայ: Եւ ուր եւ ինչ տեղ գնայաք, նա հայ գտանէաք, զի տարածեալ 215 եւ սփռեալ էին ընդ երեսս երկրի որպէս զփոշի: Կացաք անդ չորս օր:

Եւ անտի եկաք ի ՆԻԿԻՍԱՅ որ այժմ կոչի ՉԻՆԻԿ ԻՉՆԻԿ, զի անտի ելանեն չինիք, Փիլոնձանք եւ սուլահիք: Եւ էր մեծ քաղաք. ապա 220 այժմ մեծ կէսն աւերակ եւ ամայի է. եւ հասան գէչ: Եւ ի քաղքէն դուրս կային շինուածք զարմանալիք. ետրօք եւ հիմունք եւ դիքմադաշ մի որպէս ի Ստմպոլ. եւ ասին թէ յառաջն մինչեւ ի այս քաղաք էր, եւ թէ այս սեանս ներքեն սատակեցաւ պեղծն Արիոս: Եւ կայր ի քաղաքն երկու էրէց եւ ժե տուն հայ. կացաք առ նոսա ժի օր: Եւ կայր հուպ քաղքին մեծ լիճ մի, ուր վրթանէս հայրապետն Լուսաւորչի որդին ախօսս վարեաց 230 կզամբք, որ մինչեւ ցայսօր երեւին ի վերայ ջրին տեղիք ախօսացն, որպէս յերկինս պատուածք սահանաց ուստի տեղեաց անձրեւ: Եւ մերձ լճին հուպ քաղքին տեղին ուր ՅԺԸ սուրբ հարքն ժողովեցան: Եւ անտի յառաջ մեծ եկեղեցի մի զմպլթայարկ, զոր Արիանոսքն յափշտակեալ էին երբեմն ի ուղղափառաց, որ աղօթիւք սրբոյն Բասիլիոսի բացաւ եւ նոքա ամօթալից եղեն. այժմ ի ձեռս Յունաց է, բայց յոյժ հին: Իսկ պարխտան մեծ եւ 240

Եւ անտի եկաք ի ԹԻՔԻՐՏԱՂՆ: Եւ այս եւս փոքր սկէլէ էր ի վերայ դարի քաղաքին: Եւ կայր հաստատ եկեղեցի մի ի վերայ ծովու, զոր Յակոբ անուն վարդապետ մի Ձէյթունցի, զոր մեծ ջանիւ եւ տրօք բազմօք շինել էր եւ վախճանեալ թաղեալ կայր ի նմա: Եւ էր անդ երկուհարիւր կամ աւելի հայ. հինգ էրէց եւ երկու հարեղայ: Կացաք 210 անդ երկու ամիս:

Եւ անտի մտեալ ի նա՝ մտաք ի ՂԱՐՍՄՈՒՍԱԼ սքէլէն: Եւ կայր անդ էրէց մի ծերունի եւ սակաւ հայ: Եւ ուր եւ ինչ տեղ գնայաք, նա հայ գտանէաք, զի տարածեալ 215 եւ սփռեալ էին ընդ երեսս երկրի որպէս զփոշի: Կացաք անդ չորս օր:

Եւ անտի եկաք ի ՆԻԿԻՍԱՅ որ այժմ կոչի ՉԻՆԻԿ ԻՉՆԻԿ, զի անտի ելանեն չինիք, Փիլոնձանք եւ սուլահիք: Եւ էր մեծ քաղաք. ապա 220 այժմ մեծ կէսն աւերակ եւ ամայի է. եւ հասան գէչ: Եւ ի քաղքէն դուրս կային շինուածք զարմանալիք. ետրօք եւ հիմունք եւ դիքմադաշ մի որպէս ի Ստմպոլ. եւ ասին թէ յառաջն մինչեւ ի այս քաղաք էր, եւ թէ այս սեանս ներքեն սատակեցաւ պեղծն Արիոս: Եւ կայր ի քաղաքն երկու էրէց եւ ժե տուն հայ. կացաք առ նոսա ժի օր: Եւ կայր հուպ քաղքին մեծ լիճ մի, ուր վրթանէս հայրապետն Լուսաւորչի որդին ախօսս վարեաց 230 կզամբք, որ մինչեւ ցայսօր երեւին ի վերայ ջրին տեղիք ախօսացն, որպէս յերկինս պատուածք սահանաց ուստի տեղեաց անձրեւ: Եւ մերձ լճին հուպ քաղքին տեղին ուր ՅԺԸ սուրբ հարքն ժողովեցան: Եւ անտի յառաջ մեծ եկեղեցի մի զմպլթայարկ, զոր Արիանոսքն յափշտակեալ էին երբեմն ի ուղղափառաց, որ աղօթիւք սրբոյն Բասիլիոսի բացաւ եւ նոքա ամօթալից եղեն. այժմ ի ձեռս Յունաց է, բայց յոյժ հին: Իսկ պարխտան մեծ եւ 240

218 յոյժմ: — 221 յոյժմ: — 235 հայրքն: — 238 զոր: — 239 յոյժմ: 1 Յակոբ վ. Ձէյթունցի վախճանած է 1608ին. Գր. Դարանդցի, Ժամանակագրութիւն, էջ 320:

պրծերն սրխ. եւ ամէն պուրջ իբրեւ մատուռ էր նկարած պատկերօք սրբոց. եւ ամէն խուլայ մտեալ տեսաք զի այնպէս նախած էր. ապա այժմ ամայի էր եղել: Եւ ի դուռն քաղքին կոտորած էր ի վերայ մեծամեծ վիմաց երկու բարաւորս դռան, մի կողմն զպիղծն Նեստոր, յոյժ զազիր եւ դարչելի, եւ միւսն զԱրիստ՝ որովայնն հերձեալ եւ աղիքն ի դուրս վազեալ, եւ Նեստորի բերանն բաց եւ լեզուն ի կլափ տրորեալ, որ եւ տեսողացն էր ահարկու: Եւ զի օղն դառնաշունչ էր եւ դժնիկ, վասն այն ոչ միայն եկաց եւ բնակաց գոյն երեսաց զեղին եւ նուաղեալ որպէս մեռելոցն:

Եւ անտի եկաք ի գիւղ մի ԶԱՔԱՐԱՅ անուն, ուր կայր էրէց մի եւ երեսուն տուն հայ: Եւ անտի եկաք ի տափարակ տեղ մի, որ մին կողմն անտառ էր եւ միւսն լեռ քարէայր: Եւ այս լեռինս վրայ քարակոփ փոքրիկ վանք մի էր շինած ի վիմէն. եւ կայր անդ եպիսկոպոս մի Եղնիկ Կապոսու վանից, եւ երկու մալաղ²: Եւ հուպ վանաց իրեք նոր գեղ էր շինած, հայ սափի: Կացաք անդ իրեք օր:

Եւ անտի եկաք ի ԶՄԻՏ: Եւ սա մեծ սկեղէ էր. եւ պէնտէր քաղաք եւ շէն: Կայր ի նմա երկու էրէց եւ հարիւր ութսուն տուն հայի: Կացաք անդ ամիս մի. եւ եկաք կրկին դարձեալ ի Ստամպոլ եւ հանդիպեցաք ի վերայ ծովու ատա մի, որ պիղծն վազէս արկեալ գուրբն Ներսէս ի ծովն. բայց ի նա ոչ ելաք: Եւ կային Հայք ի այլ կղզիս:

Եւ կեցաք ի Ստամպոլ իրեք ամիս: Վարդապետն գնաց յայլ տեղ, զի իւր երկիրն եւ Մշու օվան Ողղլաղն աւերել էր, եւ զմարդիկս գերի տարել: Վասն որոյ երկեայ գնալ յայն կողմն: Եւ մնացեալ ժամանակս ինչ ի Ստամպոլ տրտում եւ լի սգով՝ սպասէի Աստուծոյ իմոյ՝ ակն ունելով միսթարութեան, մինչեւ այց արասցէ ինձ Տէր եւ հասուցէ զիս փափագանացս:

244 յայժմ: — 248 յորովայն: — 251 յօղն: — 258 լէն: — 270 յատկեալ: — 274 յերկիրն: — 275 յօվան էր: — 276 երկայ:

² Սօսքը առանց տարակուսի Արմաշի վանքի մասին է. ակնարկուած եպիսկոպոսն ըլլալու է Թադէոս, զոր կը յիշէ Գր. Դարանաղցի, ժամանակագրութիւն, 478:

5. ՈՒՂԵԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի Կ. ՊՈԼՍՈՅ Ի ՎԵՆԵՏԻԿ

Ապա զմտաւ ամի եւ ասեմ. մինչ խաղաղանայ երկիրն Մշու, եւ երթայց սուրբ գերեզմանն առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի: Եւ մինչ այն խորհրդեան էի, ապէնիաղն Աստուած, որ տալ ամենայնի առատապէս ըստ սրտի, զամենայն խնդիրս կատարէ, ելից եւ զիմ անարժանիս փափաղն եւ զիղծս իմ կատարեաց:

Չի եկն քարվան մի մեծ ինկուրիու դոֆով. կային ընդ նմա եւ վաճառականք հայ. այլ եւ վարդապետ մի Վանական Զաքարիայ անուն: Եւ յետ սակաւ առուրց ծանօթ եղեալ ընդ միմեանս՝ յորդորէր զիս ընդ իւր երթալ: Եւ ի թվին ՌԿ. յունիս ամսոյ ԺԱ. կոչելով զանուն Աստուծոյ յօգնականութիւն, բազում պատրաստութեամբ ելաք ի ճանապարհ:

Եւ վեց օրն հասաք ԷՏՐՆԱՅ: Եւ Ստամպոլայ մինչեւ Էտրնայ ամէնն Փարշ էր սալաւակապ, որ ոտք մարդկան կամ գրաստից ոչ թանար. եւ յամէն իջեալնի բազմածախ, մեծամեծ վիմօք մէջիղծն, խաներ, օտանի, բաղանիք, հիւրանոցք, հիւանդանոցք: Եւ երկու անգամ կերակուր կ'երնէ, փիլաֆ. զարտա ետխնի. եւ երկու Փօտոլայ հաց: Թող զպախչանին եւ գեղեցիկ սէլլի աղաչին, չէջմանին եւ աննման ջրերն: Եւ թէ հազար հոգի լինի, գան իջնուն, ուտեն, խմեն, հանգչին ինքեանք եւ գրաստքն. եւ երբ կամին բաղանիք մտնեն եւ ապա գնան: Այլ եւ տեսաք ի ճանապարհին կամարակապ վիմաչէն կամուրջնի, քան, քառասուն, եօթանասուն ակնէն ի վերայ լայն եւ մեծ գետոց: Եւ էր Էտրնայ թախտ եւ մեծահամբաւ քաղաք, յոյժ բարելի եւ մրգաշատ, լիութիւն եւ առատութիւն ամենայն իրաց. եւ երեք մեծ գետ երթայր շուրջ զքաղաքաւ՝ ուրախացուցանելով զմարդիկ ըստ Դաւթայ, թէ Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ: Եւ կայր քաղքին մէջն քարէ եկեղեցի մի Հայոց, վեց էրէց, երկու հարեղայ, մին եպիսկոպոս եւ երկու, երեք հարիւր տուն հայի. բայց տեղացիք յոյժ սակաւք: Կացաք անդ հինգ շաբաթ: Եւ քաղքին բոլորն սափի պող ու պախչա, կէս առուր ճանապարհ. այլ եւ պէնտէր, շէն: 35

35 բարելի:

Պէզիրկանի շահրիստան է, ամենեցուն զովելի:

Եւ երեալ անտի վեց օրն Ուռուփէլով հասաք ի ՀՈՒԼՈՒՊԱՅ մեծ քաղաքն¹. եւ այս քաղքին միջով երթայր մեծ գետ. եւ գտաք ի գիրս թէ այն քաղաքն Աղէքսանդրու հօրն Փիլիպպոսի Մակեդոնացոյ շինած է. եւ այլք ապիմ թէ ո՛չ այլ թէ միւս Յիլիպիայ կայ ծովու եզրն: Եւ կայր անդ էրէց մի եւ հարիւր տուն հայի: Եկեալ զմեզ մեծարեցին եւ առեալ տարան ի տունս իւրեանց. իսկ մեք ոչ կարացաք գնալ, զի քարվանն կ'երթայր: Եւ այս Հուլուպու բրինձ կ'երնէ, այլ կարմիր եւ չէ նման Մսրայ բրինձին:

Եւ կէս խօնախ խառապա մի եկաք, ԹԱԹԱՐ ՊԱԶԱՐԻ կ'ասեն: Եւ անտի եօթն օրն եկաք բազում լեռամբք եւ անտառախիտ մայրիւք եւ աղբերօք ի ՍԿՈՒԲ: Եւ կացաք անդ ժի օր, զի ճանպիսն արհ կայր Լէվէանուն եւ հարամոց: Եւ կային անդ իրեք տուն հայի, պախչաճիք, խիստ հիւրասէրք եւ երկեղածք Աստուծոյ: որ ընկալան զմեզ սուրբեանս ի պաղչան եւ միսթարեցին զմեզ կերակրովք եւ անուշ խօսիւք, մինչեւ այլ քարվան եկաւ եւ ապա ի միասին ելաք: Իսկ կապուտ քարին՝ որ է կօզտաշի՝ մէտանն անդ է. եւ կին մի պոտաւ ամալով կու բռնէ զայն մատենն:

Եւ անտի հինգ օրն հաղիւ հասաք ԵՆԿԻՊԱԶԱՐՆ՝ անցանելով զմեծամեծ եւ բարձր լեռինս եւ զխորածորս: Եւ ընդ ծործոր մի երթայր մեծ գետ մի շտաշմամբ՝ ծուռ ու մուռ, որ մէկ օրն վաթսուն անգամ անցաք մուռ, որ մէկ օրն վաթսուն անգամ անցաք գնա ձիովք եւ ջորով: Եւ այնպէս նեղ եւ անծուկ էր ճանապարհի շաւիղն, որ հաղիւ անցանէին գրաստք. վերեւն բարձր անտառախիտ քարավէժ լեռոն է, եւ ներքեւն հաղիւ երեւէր ջուրն. մեք միջովն անցաք:

Եւ այնպիսի բարձր լեռոն մի անցանէաք, որ եւ զարեգակն չտեսանէաք. այլ մշուշ եւ պող քամի. եւ այնպէս մրսեցաք, մինչ զի ամէնքն յերկվարաց իջաք. եւ բազումք հիւանդացան ի սատաիկ ցրտոյն, թէպէտ օգոստոսի ամիսն էաք: Եւ այս ճանապարհս խիստ ատաւազաւք, զի պօլուք պօլուք աս ու դող քաշեցաք, զի պօլուք պօլուք

52 փիլիպոսի մակեթոնացոյ: — 68 ինքեանս: — 71 անտ: — 77 շտաշմամբ:

¹ Ծանօթ փիլիպպոսիւս, Յիլիպէ, այժմեան Պլովզիւ քաղաքն է:

շրջէին հարամիք եւ զայն կողմանքն աւերէին, եւ զքաղաքս եւ զգիւղսն այրէին, եւ այլոց սալուռն ձգէին, որպէս յԱնատոլուն սօխթայք:

Եւ այս Ենկիպազարս կ'երնէ ազգ եւ ազգ ցեղք ու ցեղ թուրքի կուպղայք, մեծ եւ փոքր: Եւ երբ պազարի օր լինի, ամէն գեղէ, քաղքէ բերեն, զիղեն. զի ամէն ատրաֆն քիլիթէիք են. եւ եկեալ պէզիրկանք գնեն եւ տարեալ սփռեն ընդ աշխարհս ամենայն վաճառելով: Եւ ընդ մէջ քաղքին մեծ գետ մի երթայր նման Ողղլբոմախին, կարմրագոյն եւ պղտոր:

Եւ անտի հինգ օրն հասաք ՊՕՄՆԱ ՍԱՐԱՅՆ, որ էր մեծ քաղաք եւ բարձր լեռան վրայ շինեալ: Եւ սորա միջովն երթայր լայնաճաւալ գետ մի, առաւելագոյն քան զայլ գետսն: Եւ էր շէն եւ պէնտէր, եւ վաճառականաց տեղ. եւ Ուռուփէլու պէկէր պէկին անդ նստէր: Չոր գտաք անդ չորս հայ պէղիւրկան, որ զմեզ սիրով ընկալան եւ մեծարեցին ի խանն միսթարելով զմեզ. որոց Տէրն վարձահատոց լիցի: Եղաք անդ երկու օր: Եւ էին մարդիք երկրին մեծ եւ երկայն աղնաւորք, ուժեղ եւ զօրեղք, երկայն եւ յաղթանդամք. բնաւ չի գիտեն Տաճկի լեզու, բայց միայն Պուլղարի: Եւ ասին թէ Ուռուփէլին ութսուն հազար գեղ կայ Պուլղարի՝ զատ ի քաղաքաց. եւ են հոռմի դաւանութեամբ. եւ նոցա եպիսկոպոսն արհի նստի թեամբ. եւ նոցա եպիսկոպոսն արհի նստի թեամբ: Եւ թէ վասն է՞ր տաճկացի են Ատրանայ: Եւ թէ վասն է՞ր տաճկացի են Պաւառօք. ասին թէ եկեալ էր առ նոսա խաւարձի մի ժամանակ մի եւ վասն չքաւորութեան ուրացան գհաւատն, թէ չի տան խաւարձ: Իսկ խաւարձիքն ժողովեալ գնացին ի Վարին եւ հասկացուցին խօթքարին, թէ Պօնացիք ոչ վասն Աստուծոյ, այլ վասն խաւարձին տաճկացան: Վասն որոյ թագաւորն հրամայեց թէ թող տան, թէպէտ տաճիկ եղան, բայց ի հաճիցն որ Մեքան են գնացել: Նոքա տեսին որ համ ի հաւատոց զրկեցան, համ խաւարձ կու տան. սկսան Մէգան գնալ վասն խաւարձին: Ամէնքն հաճի են. սակաւ կայ ի մէջ նոցա խաւարձ տվող. զոսոս կոչեն Ուռուփէլու քաղի: Այլ եւ կայ Պօնայու բոլորն մեկու քաղի: Եւ հինգ միլ վանք շատ վանքեր Պուլղարի: Եւ հինգ միլ վանք մի կայր մեծ եւ անվանի եւ փառաւոր. եւ ասին թէ երեքհարիւր գեղ թէմ ունի, ի վերայ բարձր լեռին. եւ մտեալ ի ներս շրջեցաք եւ զԱստուած օրհնեցաք: Եւ հուպ վանաց

Ջերմուկն մեծ կայր, որ ժԳ ջաղացք կու բա-
 նեցնէր, գատ եւ որիչ միմիանց. եւ այլում
 տեղով ալ՝ մերձ Հուլուպոյ՝ տեսաք թագա-
 տորաց շինած մեծամեծ հաւուզնի եւ հուճու-
 145 րանի վիմաչէն, նման Պուրսայու խարբու-
 ճայից: Եւ Պօսնու մարդն ամէն պուլարնակ
 կու դրուցեն. եւ թէ երգվին այլ ինչ չի գի-
 տեն տաճկերէն բայց միայն զանունն Մահ-
 մատի. զի ասեն «Թաքօմի պօկայ, ի վիրա
 150 Մէհմէտայ», այս է «Ան աստուածն եւ հա-
 ւասն Մահմատի»: Եւ այլն:

Անտի եկաք երկու օր ու կէսն ի ԲիւլիՍ
 քաղաք, ի սինօրն Ֆոանկաց, որ այս կողմն
 Տաճկաց է եւ միւսն Ֆոանկաց. եւ միջովն
 155 անցանէր դեռ մի: Բայց ի ճանապարհին շատ
 վիշտ եւ նեղութիւն կրեցաք եւ աղգի աղգի
 տատապանք. այլ եւ ահ եւ դողում ի հարամ-
 կաց եւ յաւազակաց. եւ այնպէս դժուար էր,
 որ հինգ հարիւր, վեցհարիւր հոգի չիշխէր
 160 երթալ:

Եւ ելաք ի բարձր լեռ մի, որ խիտ
 բարձր եւ սիրվի էր. որ ոչ ձի եւ ոչ այլ
 գրաստ կարէր ելանել, այլ միայն ջորի-
 դուտր քար ու ապուած է եւ ոտնատեղ չկայ,
 165 այլ փայտէ աստիճանք է շինած եւ սանդուխք,
 ուստի ջորով հագիւ եւ մուտարով ելանին: Եւ
 այս Բիւլիսու ատրաֆն հող բնաւ չտեսաք,
 այլ սաֆի քար, արտերն եւ էգինին պիւր
 դուտր քարեր են մանտր: Ապա սքանչելա-
 170 գործին Աստուծոյ հազար բերան փառք, որ
 այնպիսի քարան առանց հողոյ բոյսք եւ
 տունկք եւ այգիք լինին, որպէս եւ յերուսա-
 դէմն. զի եւ յերուսաղէմ այսպէս անջրգի է
 եւ քարուտ:

Եւ իբրեւ անցաք յայնկոյս գետոյն եւ
 եկաք ի Սիւլիթ բերթն², ընդ առաջ եկին մեզ
 զինվորք. եւ մեք ինդացաք թէ զմեզ պատիւ
 տանին: Իսկ նոքա զմեզ տարան ի խան մի,
 որ կոչեն «Նագարեթ». եւ փակեալ զգրուես
 180 ի վերայ մեր՝ գնացին: Իսկ մեք զի զիւզուս
 նոցա ոչ գիտէաք եւ ոչ զերս իրացն, մնացաք
 անդ անմխիթար ի սուգ. եւ լայաք զօրն ի
 բուն: Եւ երիկունն հայեցեալ ընդ պատու-
 ճանն՝ տեսաք գրազում վաճառականս այլ եւ
 185 այլ քաղաքաց՝ Ստամպուլու, Անկուրու,
 Էտրնու, Ջուզու, եւ այլ գաւառաց, քրիստո-
 նեայք եւ անհաւատք. եւ խօսեցեալ ընդ

141 ջաղացք: — 141 բանէցնէր: — 168 էքինին:

միմեանս՝ հարցաք թէ վասն է՞ որ այսպէս ար-
 գելին: Եւ ասին թէ այսպիսի սահմանք է
 նոցա, որ թէ թագաւորն ալ գայ Թուրքաց՝ 190
 պիտոք նազարէթ քաչէ: Չոր մեք լուեալ
 տրամութիւն մեծ եւ հոգք անհնարինք կալան
 զմեզ. մինչ զի խոովեցան ոսկերք եւ ցամա-
 քեցան լեզուք մեր, եւ տառապէաք որպէս ի
 բանտի եւ ի կապանս. զի ոչ ոք երեւէր մեզ 195
 եւ ոչ մեք ումեք. զի ի միմեանց խորչէաք:
 Եւ երկրորդ օրն բերին մեզ կվարտիանտի,
 որ է նազր, եւ ասին թէ սա զամենայն ինչ
 զոր կամիք՝ կատարէ եւ գնէ: Բայց մեք զլե-
 զուս նոցա ոչ գիտէաք եւ ոչ նա զմերն, այլ
 ձեռօք եւ իշմարով հասկցնէաք, որպէս համր:
 Եւ թէ կերակուր կամ եմիչ ուզէաք, ընդ պա-
 200 տուհանն տային մեզ. եւ մեք զգրամն ընկե-
 նուաք: Եւ ես տեսեալ զայս ամենայն աղէտս
 տարակուսանաց եւ անցից զոր եկին ի գլուխս
 205 մեր եւ հառաչմամբ ասի զողբս զայս.

Տէրն ազատէ ըզմեզ աստի
 Այս նազարէթ զարիպ երկրի.
 Ղաֆիլ անկաք մեք այս տեղի,
 Փորձանք եկաւ խիտ մեր գլխի: 210
 Այս նազարէթս որ է զընտան,
 Անմեղ մարդկանց արդէլարան,
 Չէ ի գրոց, ոչ Տեառն հրաման,
 Այլ յախմարաց եղեալ սահման:
 Այս նազարէթս իժ ու գազան,
 ոչ հաց ունի ոչ ջուր յինքեան.
 Ունի անդեղու կվարտիան,
 Մեծ մեծ մրժեհ եւ շատ լլան:
 Այս նազարէթս դժոխոց նման,
 Հալէ մաչէ դոսկերս մարդկան,
 220 Աստուած առնէ մեզի տարման,
 Մէկ մի ելնեմք սորա դրան:
 Կարօտեցաք տեսոյ մարդկան,
 Եւ կերակրոցըն զանազան,
 Եւ թէ կոչես զոք քեզ ի բան,
 225 Խորչին ի քէն եւ հեռանան:
 Մեծ սուգի կամք եւ տրամութեան,
 Տէրն փրկէ ի փորձութեան.
 Այս անողորմ մարդիքս որ կան,
 Բառսուն օր մեզ պահել տրվան: 230
 Աւա՛ղ թէ ոք ի աստ գայցէ,
 Եւ շատ գրամ հետ իւր չբերէ,
 Յայնժամ նա հալըն տեսցէ,
 Որ ոչ մահու, ոչ կենաց է:

188 միմիանս: — 196 ումէք զի միմիանց:

235 Աստուած առնէ մեզի տէրման,
 Հանէ զմեզ սորա դըրան,
 Երթանք տեսնունք ըզՓոռնկիստան,
 Պօղոս Պետրոսի գերեզման:

Եւ ամէն շաբաթ գային եւ զմեր հա-
 240 դուստն եւ փարթալն եւ զուճաչն քրքրէին,
 թախէին եւ սփռէին ի պարանս. եւ այնպէս
 կախ մնային մինչ իրիկուն, եւ սակաւ մի
 մխիթարէաք հետ Հայոց զըուցով հեռեւանց:
 Եւ ասէին մեզ թէ աղբ եւ աղբ է նազարէթն.
 245 ով մոմ ունի, սէկ, սախդիան եւ այլ այսպիսի
 որ թո՛ւլ չունենայ, քսան եւ հինգ օր կու
 պահէ. եւ թէ քէպայ կամ կաչի, սօֆ, թուլ
 250 ալաթ լինի, քառսուն օր պիտի պահէ, եւ թէ
 տարի էաք. բայց վարդապետն ունէր քանի
 մն թօք սօֆ արմաղանցու, վասն այն արգե-
 լեցին զմեզ քառսուն օր: Ո՛հ, ո՛հ, ո՛հ, վա՛յ
 զիս: Բայց վարդապետն տրտնջէր եւ յոյժ
 255 կանար, սրտմտէր եւ յոգոց հանէր, ասելով
 թէ ազատ գուրով եւ անձնիշխան՝ եկաք մտաք
 իւրովի կամաւ ի նեղ զընտան:

Եւ իբրեւ կատարեցան աւուրքն սըպ
 քառսուն օր, հանին զմեզ ի դուրս: Մտեալ
 260 ի քաղաքն տեսաք փառաւոր եկեղեցիս եւ
 բարձր զանկաղատունս վիմաչէն, այլ եւ մե-
 շ ծամեծ զանկաղս, որ ի հնչէն զուարճանային

հոգիք ի քաղցր եւ համեղ ձայնն. եւ խաչեր
 մեծամեծ ի վերայ եկեղեցեաց եւ զանկաղ-
 անից՝ ոսկէջրած: Եւ անդ այլ ոչ երեւէր տա-
 265 ճիկ կամ հրաման Թուրքաց, այլ բովանդակ
 քրիստոնէութիւն էր: Չայս ամենայն տեսալ
 ուրախացաք եւ բերկրեալ ցնծացաք հոգով
 եւ մարմնով, մինչ զի մոռացաք զամենայն
 նեղութիւն եւ զաանջանս, եւ զգժուարու-
 270 թիւն ճանապարհին, այլ եւ նազարէթին. զոր
 այսուհետեւ բարձաւ իշխանութիւն եւ զօրու-
 թիւն Տաճկաց եւ թագաւորեաց Քրիստոս
 քրիստոնէիւք: Եւ քաղաքս էր սքէլէ եւ ծո-
 վահայեաց. եւ շուրջ զնովաւ էին այգիք եւ
 275 թղենիք:

Եւ կացաք անդ մինչեւ եկին զատրղայք
 վէնէտիկու զի եւ ի վերայ ծովուն այն կային
 հարամիք. եւ իրեք օրն հասաք յատա մի
 280 ԶԱՏՐԱՅ անուն. եւ մտեալ յինքն տեսաք
 պայծառ եկեղեցիս, վանորայս եւ եպիսկոպո-
 սարանս՝ գեղեցիկ վիմօք եւ աշտարակօք չի-
 նեալ. այլ եւ զանառիկ բերթն եւ զպարիսպ
 քաղաքին, որ էր թիկնապահ:

Եւ անտի ելեալ բազում քաղաքաւ եւ 285
 զղեկօք, բերթուսօք եւ վանորայիւք ի վայե-
 լուչ տեղիս. զորս ոչ գրեցի մի ըստ միտջէ:

(Շարունակելի:.) Հրատարակեց՝ Հ. Ն. Ահիսեան

275 յայգիք: — 277 անդք:

ՈՒԹՍՈՒՆԱՄԵԱԿ
 ՎՍԵՄ. Տ. ԳԱԲՐԻԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆԻ
 1852—1932

Տարույս Նոյեմբեր 6ին տօնեց ի Պարիս Վսեմ. Տ. Գաբրիէլ Նորատունկեան իւր
 ծննդեան 80ամեակը:
 Միջազգային-քաղաքական եւ կրթական ասպարէզ-
 ներու վրայ բարգաւաճեց Նորատունկեան բազմարդիւն եւ բեղմնաւոր գործունէութիւն
 մը, շատ կնճոտ ժամանակներու մէջ, ուր բերաւ երեւան կարող եւ ննարագէտ հանճար
 մը, որուն վրայ կրնայ իրաւամբ պարծիլ հայր եւ զարմանալ օտարը:
 Երախտագէտ զգածումներու արտայայտութեանց, որոնք յայտնուեցան մեծանուն
 Վաստակաւորին այս բարենշան տարեդարձին առթիւ ընդհանուր Ազգէն, կը խառնենք
 եւ մենք մեր հիացմունքը եւ շնորհաւորութիւնները, մաղթելով ակեզարդ Գործիչին
 երկարութիւն ամաց եւ քաջաոողջութիւն:
 ԵՍՏՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 «ՀԱՆՐԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»